

Գրանցված է

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկում
Նախագահ՝ Արթուր Զավադյան

« 19 » 05 2011թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ

1. «Սակագների մասին կանոններ»-ի 3.2. կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«3.2. Սույն կանոններում կիրառվող հասկացությունները ունեն Օրենքով և Դեպոզիտարիայի այլ կանոններով սահմանված նշանակությունները:»:

2. «Սակագների մասին կանոններ»-ի 5.4. կետով սահմանված «Բանաձև 1»-ը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Բանաձև 1.

$$\text{ԾՎ} = (\text{ԲՔ} * \text{ՀՍ} / \text{ԿՕՔ}) * \text{ՌՎՊՕ} \text{ որտեղ՝}$$

ԾՎ - ծառայության վճար,

ԲՔ - բաժնետերերի քանակ,

ՀՍ - համապատասխան սակագին, որը սահմանված է սույն կանոնների 6.2. կետով,

ԿՕՔ -տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև հունիսի 30-ը ներառյալ կամ հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում օրերի քանակն է,

ՌՀՊՕ – հունվարի 1-ից մինչև հունիսի 30-ը ներառյալ կամ հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում այն օրերի քանակն է, որոնց ընթացքում Դեպոզիտարիան մատուցել է տվյալ թողարկողի ռեեստրում գրանցված սեփականատերերի (անվանատերերի) հաշվառման և պահպանման ծառայություն: »:

3. «Սակագների մասին կանոններ»-ի 5.10. կետից հետո լրացնել նոր «5.11.» կետ հետևյալ բովանդակությամբ.

«5.11. Այն դեպքում, երբ թողարկողի և Դեպոզիտարիայի միջև կնքված անվանական արժեթղթերի գրանցված սեփականատերերի ռեեստրի վարման պայմանագիրը կնքելու օրվանից հաշվված 3 տարվա ընթացքում լուծվում է թողարկողի դիմումի համաձայն՝ այլ ռեեստրավարի մոտ հաշվառվելու նպատակով, ապա թողարկողը պարտավոր է Դեպոզիտարիային վճարել միանվագ 100 000 ՀՀ դրամ՝ որպես պայմանագրի կնքման ժամանակ կատարված ծախսերի փոխհատուցում: »:

4. «Սակագների մասին կանոններ»-ի 6.4.1. կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

□«6.4.1. Կանոնադրական կապիտալի ավելացում՝ բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացմամբ և կանոնադրական կապիտալի նվազեցում՝ բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացմամբ, վերակազմակերպման (բացառությամբ վերակազմավորման) արդյունքում արժեթղթերի փոխարկում այլ արժեթղթերով, արժեթղթերի համախմբում (կոնսոլիդացիա), արժեթղթերի բաժանում, թողարկողի որոշմամբ մեկ դասի (տեսակի) արժեթղթերի փոխարկում մեկ այլ դասի (տեսակի) արժեթղթերով

կորպորատիվ գործողության արդյունքում փոխարկված արժեթղթերի (արժեթղթի) ընդհանուր անվանական արժեքի 0,05%-ի չափով, սակայն ոչ պակաս քան 30 000 ՀՀ դրամը և ոչ ավել քան 600 000 ՀՀ դրամը»:

5. «Սակագների մասին կանոններ»-ի 6.4.1. կետից հետո լրացնել նոր «6.4.1.՝» կետ հետևյալ բովանդակությամբ.

«6.4.1.Արժեթղթերի հետգնում կամ ձեռք բերում, հետգնված կամ ձեռքբերված արժեթղթերի մարում

հետ գնված կամ ձեռքբերված, մարված արժեթղթերի (արժեթղթի) ընդհանուր անվանական արժեքի 0,05%-ի չափով, սակայն ոչ պակաս քան 30 000 ՀՀ դրամը և ոչ ավել քան 600 000 ՀՀ դրամը»:

6. «Սակագների մասին կանոններ»-ի 6.5.2. կետի «գործառնությունների» բառից հետո լրացնել «(արժեթղթերի փոխանցում) » բառերը:

7. «Սակագների մասին կանոններ»-ի 6.5.3. կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«6.5.3.Թողարկողի հարցման հիման վրա այլ տեղեկությունների (բացառությամբ սույն կանոնների 6.5.2. կետով սահմանված տեղեկությունների) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում

6000 ՀՀ դրամ,
էլեկտրոնային տրամադրման դեպքում 5000 ՀՀ դրամ մեկ տեղեկանքը»:

8. «Սակագների մասին կանոններ»-ի 6.7. կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«6.7. Արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագրի շնորհման համար գանձվում է.»:

9. «Սակագների մասին կանոններ»-ի 6.7.1. կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«6.7.1.Արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագրի շնորհում

50 000 ՀՀ դրամ
մեկ ծածկագրի շնորհումը »:

10. Անցումային դրույթներ

Սույն փոփոխությունները և լրացումները հանդիսանում են «Սակագների մասին կանոններ»-ի անբաժանելի մասը և ուժի մեջ են մտնում ՀՀ կենտրոնական բանկում գրանցման պահից մեկ ամիս հետո:

Հաստատված է.

«Հայաստանի կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ
Դիտորդ խորհրդի 20.04.2011թ. որոշմամբ

Ա. Մելիքյան
ք.Երևան